

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ

ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ (ՍԹԱ) ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ
ՆԱԽԱԳԻԾ

ՏՆՕՐԵՆ



Գ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՐԵՎԱՆ - 2024

Կատարողների ցանկ՝

Անկախ փորձագետ՝ – Ա. Սահակյան

Համակարգչային հաշվարկը կատարվել է «Էկո ցենտր»

ծրագրի միջոցով «Էկոբարիք-աուդիտ» ՍՊԸ կողմից:

ԱՆՆՈՏԱՑԻԱ

Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսանում «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ գործունեության ընթացքում առաջացած արտանետումները:

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ հիմնականում զբաղվում է ասֆալտ բետոնի, ապրանքային բետոնի, խճի մանրեցման և չոր շինարարական խառնուրդների արտադրությամբ:

Ձեռնարկությունն ունի մթնոլորտ աղտոտող 7աղբյուր, որոնցից արտանետվում է 4 վնասակար նյութեր:

Արտանետումների ընդհանուր քանակը կազմում է **101.915** տ/տարի, այդ թվում`

Փոշի անօրգանական(SiO_2 20 -70%)	- 65.0տ./տարի
Ածխածնի օքսիդ	- 27.801տ./տարի
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	- 6.114տ./տարի
Ածխաջրածիններ	- 3,0տ./տարի

Հաշվարկները կատարվել են տարեկան 75000 տոննա ասֆալտ - բետոնի, 75000 մ³ ապրանքային բետոնի, 200 000 մ³ խճի մանրեցման և 2 400 000 մ³/տարի զազի ծախսի համար:

Գումարային հատկության նյութեր չկան:

ՍԹԱ նորմատիվներին հասնելու ժամկետը համարվում է հաստատման պահից:

Ընկերության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում: Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹԽ, դրա համար անհրաժեշտ ծախսեր չի նախատեսված:

- Արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք վնասի մեծությունը կազմում է - **3052904** դրամ, հաշվարկը տես հավելված 2-ում:

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ փաստացի արտանետումների ցուցանիշների հիման վրա հաշվարկվել է օդի պահանջվող օգտագործումը (ՕՊՕ-ի հաշվարկը հավելված-1), որի արդյունքում պարզվել է, որ ձեռնարկության արտանետումները մեկ տարում գերազանցում են երկու միլիարդ մ³ չափանիշը (**815.117**մլրդմ³/տարի), ուստի արտանետման չափաքանակները կարող են սահմանվել ՍԹԱ նախագծի հիման վրա:

Աշխատանքի նպատակն է մշակել մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը:

Նախագծի մշակման համար հիմք է հանդիսացել 04.01. 2024թ. N 32 -Ն որոշումը «Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացված իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին»

Աշխատանքի նպատակն է մշակել մթնոլորտն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների (ՍԹԱ) նորմատիվների նախագիծը:

Աշխատանքում ի մի են բերվել ձեռնարկության գործունեությունից առաջացող մթնոլորտն աղտոտող աղբյուրների արտանետումների որակական և քանակական բնութագրերը:

Ներկա աշխատանքում բերված են աղտոտման աղբյուրների տեխնիկական հետազոտման արդյունքների տվյալները՝ տեքստային և աղյուսակային տեսքով:

Կատարված է մթնոլորտն աղտոտող նյութերի ցրման հաշվարկը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա

1. Տնտեսվարող սուբյեկտի մասին ընդհանուր տեղեկություններ - 6
2. Տնտեսվարող սուբյեկտի բնութագիրը որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր - 9
3. Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի անվանացանկը - 13
4. Ջարկային արտանետումներ ունեցող աղբյուրների թվարկումը և բնութագիրը - 14
5. ՍԹԱ նորմատիվների հաշվարկի համար աղտոտող նյութերի պարամետրերը - 15
6. ՍԹԱ նորմատիվների հաշվարկի համար անհրաժեշտ ելակետային տվյալները - 19
7. Վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկը - 20
8. Վնասակար նյութերի ցրման հաշվարկի հակիրճ արդյունքները - 21
9. Մթնոլորտ ամենամեծ աղտոտումներ առաջացնող աղբյուրների ցուցակը - 22
10. ՍԹԱ նորմատիվներ հասնելու միջոցառումների ծրագիր - 23
11. Աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ արտանետման թույլտվություն - 25
12. Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ արտանետումների կարգավորման միջոցառումներ - 26
13. Արտանետումների վերահսկման և ՍԹԱ կատարման նպատակով նախատեսվող և իրականացվող միջոցառումներ - 27
 - Օգտագործված գրականություն - 34
 - Հավելվածներ`
 - ՕՊՕ-ի Հաշվարկը ըստ տվյալ ձեռնարկության-հավելված-1 - 28
 - Վնասի հատուցման հաշվարկը -հավելված-2 - 29
 - Ձեռնարկության պլան-սխեման
 - Ռելիեֆի գործակիցը
 - Կլիմայական տվյալներ
 - Ֆոնային աղտոտվածության տվյալներ
 - Մեքենայական հաշվարկներ

**1. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ հիմնականում զբաղվում է շինարարական աշխատանքներով: Նշված աշխատանքներն իրականացնելու համար իր ենթակայության տակ ունի ասֆալտ - բետոնի, ապրանքային բետոնի, խճի մանրեցման և չոր շինարարական խառնուրդների արտադրություններ:

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ գտնվում է ՀՀ Սյունիքի մարզի, Քաջարան համայնքի, Լեռնաձոր գյուղի ազատ տարածքում, մոտ ավտոճանապարհին, մոտակա բնակելի տարածքը գտնվում է 350մ հեռավորության վրա:

Տեղադրված է տեղանքի իրավիճակային քարտեզը, որտեղից երևում է որ մոտակայքում բացակայում են նախադպրոցական, դպրոցական, կազմակերպություններ, հիվանդանոցներ, սննդի օբյեկտներ, գյուղատնտեսական մշակահողեր և այլն չկան:

Համաձայն CH-245-71 արտադրատարածքը 300մ սանիտարա-պաշտպանական գոտով պատկանում են 3 դասին:

Պետ. ռեգիստրի գրանցման համարը՝ 72.110.959348, տրված 22.05.2017թ.


Իրավաբանական հասցեն է՝

**ՀՀ Սյունիքի մարզ, գ. Լեռնաձոր,
Բարիկավան թաղ.4-րդ փող. 1/1**

Գործունեության հասցեն՝

**ՀՀ Սյունիքի մարզ, Քաջարան համայնքի,
գյուղ Լեռնաձոր, Անդրկավան թաղ. 2-րդ փող.
19 պահեստ**

ՍԽԵՄԱ
 Վնասակար նյութերի արտանետման աղբյուրների
 «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ
 Մ 1 : 1000



Տեղանքի իրավիճակային քարտեզ
«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ



«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ

2. ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒՔՅԵԿՏԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՐՊԵՍ ՄԹՆՈՒՈՐՏԱՅԻՆ ՕՂՆ ԱՂՏՈՏՈՂ ԱՂՔՅՈՒՐ

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ հիմնականում զբաղվում է ասֆալտ - բետոնի, ապրանքային բետոնի, խճի մանրեցման և չոր շինարարական խառնուրդների արտադրությամբ:

Արտադրության գործընթացում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հիմնական աղբյուր են հանդիսանում հետևյալ գործընթացները`

- **Ասֆալտ-բետոնի հանգույցը**
- **Բիտումի պահպանման, տաքացման բաքերը**
- **Բետոնի պատրաստման հանգույցը**
- **Խճի ջարդման և մանրեցման հանգույցը**
- **Իներտ նյութերի կուտակման հրապարակը**
- **Չոր շինարարական շաղախների արտադրամասը**
- **Հումքի չորացման տեղամասը**

Արտադրության բնութագիրը`

- **Ասֆալտ-բետոնի հանգույցում** տեղադրված է ասֆալտ-բետոնի պատրաստման մեկ հոսքագիծ` KOBESH AS120 մակնիշի, տարեան արտադրում է 75000 տոննա ասֆալտ-բետոն, 1:տոննա ասֆալտ-բետոնի պատրաստման համար ծախսվում 12մ³ գազ: Ընդամենը 900 000մ³ գազ, որից 200 000մ³ բիտումի տաքացման համար:

Ասֆալտ-բետոնի պատրաստման պրոցեսն ընթանում է հետևյալ փուլերով`

- Իներտ նյութերի (ավազ, խիճ) բեռնաթափում, խառնում դասակույտերով և նրանց բնական չորացում, որոնք հանդիսանում են փոշու արտանետման հիմնական աղբյուրներից մեկը:

- Կոնվերթի միջոցով չափավորվող բունկերից իներտ նյութերը փոխադրվում են չորացնող թմբուկ, որտեղ նրանք տաքացվում են 140-160⁰C:

- Տաքացված իներտ նյութերի տեսակավորումն ըստ մասագատիչների շերտիավոր էլեվատորի և վիբրացիոն քարմաղի օգնությամբ: Տեսակավորված բաղադրամասերը տեղավորվում են առանձին խցերում:

- Բիտումի տաքացումը և ջրազրկումը կատարվում է գազայրիչի միջոցով, ծխախողովակ ունեցող բիտումի բաքերում:

Հավված բիտումը տրվում է խողովակաշարով ասֆալտ-բետոնի կայանքի դոզատոր, տեղի է ունենում բոլոր կոմպոնենտների խառնում:

Պատրաստի ասֆալտ-բետոնը բեռնաթափվում է անմիջապես ավտոինքնաթափերի մեջ:

Արտանետման հիմնական աղբյուր է հանդիսանում ասֆալտախառնիչ սարքը, որի կազմի մեջ մտնում են սնման, չորացման, չափավորման և խառնիչ ագրեգատները, բիտումի և հանքային փոշիների տարողությունները:

Իներտ նյութերի տաքացման համար գազի այրման ընթացքում չորացնող թմբուկում առաջանում են տաք ծխագազեր և փոշի, որոնք մտնում են մրրիկային փոշեորսիչ ագրեգատ /ֆիլտր/ և լրացուցիչ մաքրվելուց հետո արտանետվում են մթնոլորտ: Աֆալտ-բետոնի հանգույցը հիմնականում աշխատում է բնական գազով, որի ծախսը կազմում է - **700 000մ³/տարի**:

Նշված գործընթացից արտանետվում են՝ անօրգանական փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, ածխաջրածիններ N 1 աղբյուրից:

- Բիտումի տաքացումը և ջրազրկումը կատարվում է գազայրիչի միջոցով, ծխախողովակ ունեցող բիտումի 50 տոն.տարողությամբ բաքերում – 4 հատ - գազի ծախսը -**200 000մ³/տարի**:

- **Բիտումի** պահեստավորումից և տաքացումից արտանետվում են ածխաջրածիններ, ածխածնի օքսիդ և ազոտի օքսիդներ N 2 աղբյուրից:

Ասֆալտ-բետոնի հանգույցի ընդհանուր գազի ծախսը կազմում է - 900 000 մ³/տարի (պահեստային վառելիք նախատեսված չէ):

- **Բետոնի պատրաստման հանգույցը** փակ համակարգ է, որտեղ կատարվում է բետոնի շաղախի ստացման աշխատանքներ, օգտագործելով ցեմենտ, իներտ նյութեր /ավազ, խիճ/, նշված բաղադրամասերը փոխադրիչի միջոցով դոզատորներից լցվում են բետոնախառնիչ, որտեղ միաժամանակ ցեմենտի պահպանման բունկերից մղվում է համապատասխան քանակի ցեմենտ, համասեռնվում է ջրով և տեղափոխվում է օգտագործման ըստ անհրաժեշտության: Ժամում արտադրում է 25 մ³ բետոն:

Տարեկան արտադրում է 75000 մ³ ապրանքային բետոն:

Բետոնի պատրաստման գործընթացում արտանետման հիմնական աղբյուր են հանդիսանում՝ իներտ նյութերի բաց պահեստները և ցեմենտի բեռնման - բեռնաթափման ժամանակ տրման խողովակները, ցեմենտի սիլոսը, բեռնաթափման, պահպանման, պահեստավորման գործընթացները, ինչպես նաև զետեղարանից դոզատորների միջոցով խառնիչ և զետեղարանի բեռնաթափման հանգույցը:

Բետոնի հանգույցի վրա տեղադրված է 2 հատ ցեմենտի բունկեր: Ցեմենտի բունկերը ապահոված են փոշեորսիչներով՝ թևքային ֆիլտրով ՖՎ – 30 տիպի:

Զտիչը համակցված տեսակի է, որոնց վրա փոշին նստելուն պես մաքրման համակարգը սկսում է գործել ցիկլոնի սկզբունքով: Մաքրումը կատարվում է սեղմված

օդի օգնությամբ կայնական հոսքով, որը թույլ է տալիս փոշուն նորից ընկնի բունկերի մեջ: Թևքային ֆիլտր ՖՎ – 30 գունարային արտադրողականությունը կազմում 93%:

Նշված գործընթացներից արտանետվում է անօրգանական փոշի N 3 աղբյուրից:

- *Խճի ջարդման և մանրեցման հանգույցում* կատարվում է քարերի ջարդման-տեսակավորման աշխատանքներ, բեկորների պահեստավորում, որից հետո հումքը լցվում է ընդունման բունկեր և ժապավենային փոխադրիչների միջոցով հումքը տրվում է կոտորակիչներ, տեսակավարող մաղեր, որից հետո ըստ ֆրակցիաների պահեստավորվում է: Խճի տարեկան արտադրողականությունը կազմում է **200000մ³**:

Ջարդիչների բացթողման ձեղքերի փոփոխմամբ կարգավորվում է անհրաժեշտ քանակի արտադրատեսակների ելքը: Այնուհետև մանրեցված զանգվածը որը կատարվում է քարմաղի օգնությամբ ըստ պահանջվող ֆրակցիաների, ժապավենային փոխադրիչների միջոցով լցվում են խճի և ավազի կուտակման հրապարակ, վորտեղից օգտագործվում է արտադրությունում:

Արտանետվում է անօրգանական փոշի N 4, 5 աղբյուրներից:

Իներտ նյութերի բաց պահեստները հաճախ ջրում են փոշու արտանետումները մեղմացնելու համար:

- *Չոր շինարական շաղախների արտադրամասում* տեղադրված են 4 հատ սիլոսներ, 2հատ բունկերներ 5 հատ խառնիչ: հիմնական հումքն է՝ ավազը, ցեմենտը, գիպսը, կավձափոշին, ցեյուլոզան պոլիմերներ և այլ անհրաժեշտ հավելումներ:

Անհրաժեշտ օգտագործվող հումքը չորացման ցիկլը անցնելուց հետո կոնվեերի օգնությամբ լցվում է վիբրացիոն մաղի վրա պահանջվող հատիկաչափական կազմը ստանալու համար: Այնուհետև վերոնշյալ հումքը ավտոմատացված համակարգի միջոցով հատուկ խառնիչներում ըստ քանակությամբ խառնվում է շինարարական հավելումների և քիմիական նյութերի հետ, որից հետո համասեռ խառնուրդը ուղարկվում է փաթեթավորման: Արտանետվում է անօրգանական փոշի N 6 աղբյուրից:

- *Հումքի չորացման տեղամասում* տեղադրված է 1 հատ գազով աշխատող թմբուկային պտտվող չորանոց վառարան, 5 տոննա արտադրողականությամբ, օգտագործվող հումքը չորացնելու համար: Չորացնող վառարանի վերջնամասում տեղադրված է ցիկլոն, ջրային ֆիլտրացիոն համակարգ, որտեղ ջրային շիթի միջոցով կատարվում է փոշու նստեցում՝ արտանետումները նվազեցնելու համար:

Ավազի տաքացման ժամանակ գազի այրման ընթացքում չորացման վառարանում առաջանում են տաք ծխագազեր և փոշի, փոշին մտնում է փոշեորսիչ համակարգ/ցիկլոնների/,- չորս ցիկլոնների խումբ, 93% մաքրվելուց հետո արտանետվում են մթնոլորտ:

Գազի այրման արդյունքում մթնոլորտ արտանետվող ազոտի և ածխածնի օքսիդների հաշվարկները կատարվել են գազի վառարանների համար սահմանված գործակիցներով՝ որտեղ 1000մ^3 գազի համար կազմում են՝ ածխածնի օքսիդը – 0.0129տ. , ազոտի օքսիդները – 0.00215տ. :

Տարեկան չորացման տեղամասում ծախսվում է $1\,500\,000\text{մ}^3$ գազ:

Նշված գործընթացից արտանետվում են՝ անօրգանական փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ N 7աղբյուրից:

Ընկերության ընդհանուր գազի ծախսը կազմում է - $2\,400\,000\text{մ}^3/\text{տարի}$ (պահեստային վառելիք նախատեսված չէ):

- Արտանետումների աղբյուրները հագեցած են փոշեվորսիչ սարքավորումներով իսկ որոշ մասը բաց արտադրական մակերեսներ են, որոնց հագեցումը փոշեորսիչ սարքերով գործնականում անհնար է, ուստի տեխնոլոգիական և փոշեգազամաքման սարքավորումների արդիականության և տվյալ արտադրության լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառում չի նախատեսվում:

Փոշու արտանետումները մեղմացնելու և նվազագույնին հասցնելու համար կատարվում է ջրցանման աշխատանքներ:

- Տեխնոլոգիական սարքավորումների քանակը, արտանետման աղբյուրների պարամետրերը, վնասակար նյութերի արտանետումների քանակը և տեսակը բերված են աղյուսակ 3-ում:

Մոտակա տարիների ընթացքում ձեռնարկության տեխնոլոգիական ծավալների փոփոխություններ չեն սպասվում, ուստի աղյուսակ 3 հեռանկար սյունյակը չի լրացվում:

**3. ՄԹՆՈՒՈՐՏ ԱՐՏԱՆԵՏԿՈՂ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ
ԱՆԿԱՆԱՑԱՆԿԸ**

ԱՂՅՈՒՄԱԿ 1

Փոշի անօրգանական (SiO ₂ 20-70%)	0.3	65.0
Ածխածնի օքսիդ	5.0	27.801
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.2	6.114
Ածխաջրածիններ	1.0	3.0

Գումարային հատկության նյութեր չկան:

**4. ՋԱՐԿԱՅԻՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԱՂՔՈՒՐՆԵՐԻ
ԹՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ԱՂՅՈՒՍԱԿ 2.

Արտադրամասի (տեղամասի) և աղբյուրների անվանումները	Նյութի անվանումը	Նյութի զարկային արտանետումը գ/զարկ	Արտանետման պարբերական ուղյունը, (անգամ/ տարի)	Արտանետման տևողությունը, վրկ	Ջարկային արտանետումնե րի տարեկան քանակությունը, տոն.
1	2	3	4	5	6

Տեխնոլոգիական գործընթացից զարկային արտանետումներ չեն առաջանում, այդ պատճառով աղյուսակ 2-ը չի լրացվել:

5. ՍՅԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՍԱՐ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Աղյուսակ 3

Արտադրություն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները	Աշխատաժամը տարում		Արտանետման աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը			
		Անվանումը	Քանակը	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
<i>Անֆալտ-բետոնի հանգույց</i>	Նախ.դոզավորման բունկերներ Ժապ. փոխադրիչ չորացնող թմբուկ խառնիչ	3 2 1 1		3000		խողովակ		1		1	
<i>Բիտումի պահպ տաք. բաքեր</i>	Բիտումի բաքեր զագայրիչով	4		3000		խողովակ		1		2	
<i>Բետոնի պատրաստման հանգույց</i>	Նախ. դոզավորման բունկերներ Ժապ.փոխադրիչ Բետոնախառնիչ Ցեմենտի բունկեր	2 2 1 2		3000		խողովակ		1		3	
<i>Խճի ջարդման և մանրեցման հանգույցներ</i>	Խճի կուտակման հրապարակ Բունկեր Կոտորակիչ Քարմաղ Ժապ. փոխադրիչ	1 2 2 2 9		3000		անկազմակերպ		1		4	
	Իներտ նյութերի կուտուտակման հրապարակ	2		4800		անկազմակերպ		1		5	
<i>Չոր շինարական շաղախների արտադրամաս</i>	Սիլոս Բունկեր Խառնիչ	4 2 5		3000		խողովակ		1		6	
<i>Հումքի չորացման տեղամաս</i>	Թմբուկային չորանոց	1		4800		խողովակ		1		7	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը մ		Գագաթոյաին խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						արագությունը մ/վրկ		ծավալը մ ³ /վրկ		ջերմաստիճանը	
ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1		15		0.6		30.2		8.54		150	
2		3		0.3		32.6		2.304		120	
3		12		0.6		25.0		7.07		20	
4		5		100		6.0		47124,0		20	
5		4		100		5.0		39270,0		20	
6		11		0.6		30.8		8.708		20	
7		11		0.6		28.4		8.03		140	

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Կոորդինատները քարտեզում, մ				Գագերը մաքրող սարքերի անվանումը		Մաքրվող նյութերը		Մաքրման միջին շահագործման աստիճանը		
		Կետային աղբյուրի, աղբյուրների խմբի կենտրոնի կամ գծային աղբ. 1-ին ծայրի		գծային աղբյուրի 2 -րդ ծայրի				Ապահովվածության գործակիցը %		Մաքրման առավելագույն չափը, %		
ՆԿ	Հ	X1	Y1	X2	Y2	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	ՆԿ	Հ	
11	12	23	24	25	26	27		28	29	30	31	32
1		150	170	-	-	ցիկլոնների խումբ CKD-ԼԿ-33		100		95		
2		110	140	-	-							
3		90	100	-	-	թեքային ֆիլտր ՖՎ – 30		100		98		
4		180	100	280	200							
5		170	10	270	110							
6		410	190	-	-							
7		400	170	-	-	ցիկլոն		100		93		

3-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը	Նյութի անվանումը	Աղտոտող նյութերի արտանետումները						ԱԹԱ հասնելու տարին
		ՆԿ			Հ (ԱԹԱ)			
		գ/վրկ	մգ/մ3	տ/տ	գ/վրկ	մգ/մ3	տ/տ	
1	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.648	75.88	7.0	0.648	75.88	7.0	2024
	Ածխածնի օքսիդ	0.609	71.31	6.573	0.609	71.31	6.573	
	Ազոտի օքսիդներ	0.208	24.35	2.247	0.208	24.35	2.247	
	Ածխաջրածիններ	0.194	22.72	2.100	0.194	22.72	2.100	
2	Ածխածնի օքսիդ	0.174	75.58	1.878	0.174	75.58	1.878	2024
	Ազոտի օքսիդներ	0.060	26.04	0.642	0.060	26.04	0.642	
	Ածխաջրածիններ	0.083	36.02	0.900	0.083	36.02	0.900	
3	Փոշի անօրգանական (SiO ₂ -20 -70%)	0.463	65.49	5.0	0.463	65.49	5.0	2024
4	Փոշի անօրգանական (SiO ₂ -20 -70%)	2.380	0.050	25.700	2.380	0.050	25.700	2024
5	Փոշի անօրգանական (SiO ₂ -20 -70%)	1.070	0.027	18.5	1.070	0.027	18.5	2024
6	Փոշի անօրգանական (SiO ₂ -20 -70%)	0.370	24.49	4.0	0.370	24.49	4.0	2024
7	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	0.278	34.62	4.8	0.278	34.62	4.8	2024
	Ածխածնի օքսիդ	1.120	139.5	19.350	1.120	139.5	19.350	
	Ազոտի օքսիդներ	0.187	23.29	3.225	0.187	23.29	3.225	

ՆԿ՝ ներկա վիճակ, Հ՝ հեռանկար

**6. ՍԹԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ**

Կատարվել է մթնոլորտն աղտոտող նյութերի աղբյուրների գույքագրում: Ըստ գույքագրման արդյունքի ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները կազմվել և հաշվարկվել են ГООТ 17.2.3.02 - 2014 - ին համապատասխան և բերված են 3 աղյուսակում:

Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Նստեցման անչափելի գործակիցն ընդունվել է՝ գազանման վնասակար նյութերի և մանր դիսպերսության փոշու համար, որոնց նստեցման կարգավորված արագությունը չի գերազանցում 3-5 սմ/վրկ՝ 1, խոշոր դիսպերսության փոշու համար մաքրման բացակայության դեպքում՝ 3, մաքրման դեպքում՝ 2:

Քանի որ Լեռնաձոր գյուղում և մերձակայքում չկան դիտակետեր և չեն իրականացվում ֆոնային աղտոտվածության չափումներ, ցրման հաշվարկների ժամանակ ընդունվել են ՀՀ որոշ բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ (հնգամյա միջին) մինչև 10 հազ. բնակչությամբ բնակավայրի համար, որոնց թվին է պատկանում նաև Լեռնաձորը : • Փոշի՝ 0.071 մգ/մ³ (փոշու ֆոնի տվյալները ներկայացված է 0.5մգ/մ³ ՍԹԿ ունեցող չտարբերակված փոշիների՝ այսինքն կախված մասնիկների համար), • Ազոտի երկօքսիդ՝ 0.023 մգ/մ³ ; • Ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ³ • Ծծմբի անհիդրիդ՝ 0.006 մգ/մ³

7. ԿՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԸ

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրվածության հաշվարկները կատարելու համար ճշգրտված և ուղղված տվյալների հիման վրա կազմվել են ՍԹԱ հաշվարկի ելակետային տվյալները:

Հաշվարկները կատարվել են «Տարբեր արտադրությունների կողմից մթնոլորտըն աղտոտող նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդիկան» ժողովածուի հիման վրա:

Վնասակար նյութերով մթնոլորտի աղտոտվածության հաշվարկը կատարվել է «Էկո ցենտր» հնակարգչային ծրագրով:

Գետնամերձ խտությունների բաշխման որոշումը կատարվել է 1000 x 1000մ քառակողուսում 50մ քայլով:

ՕՂԵՐԵԿՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԲՆՈՐՈՇՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՄԹՆՈՒՈՐՏՈՒՄ ԿՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ցրման պայմանները որոշող օդերևութաբանական բնութագրերը և գործակիցները ներկայացված են ստորև բերված աղյուսակում: Սահմանային թույլատրելի առավելագույն միանվագ կոնցենտրացիաները վերցված են ՀՀ կառավարության 2006թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ հաստատված ցանկից:

Աղյուսակ 4

ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՐԺԵՔԸ
Մթնոլորտի ստրատիֆիկացիայի գործակիցը, A	200
Տեղանքի ռելեֆի գործակիցը (հաշվարկված համաձայն կողմնորոշչի)	1.0
Տարվա ամենաշոգ ամսվա միջին առավելագույն ջերմաստիճանը T °C	29.6
Միջին տարեկան քամիների վարդը 8 ուղղություններով (ռումբ %)	
Հյուսիս	6
Հյուսիս-արևելք	17
Արևելք	8
Հարավ-արևելք	12
Հարավ	20
Հարավ-արևմուտք	19
Արևմուտք	11
Հյուսիս-արևմուտք	5
Քամու բազմամյա միջին արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ)	3.4
Քամու բազմամյա միջին առավելագույն արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ)	23

**8. ՎՆԱՍԱԿԱՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՐՄԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ
ՀԱԿԻՐՃ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Մթնոլորտում վնասակար նյութերի արտանետումների ցրման հաշվարկի արդյունքները ներկա վիճակի և հեռանկարի համար ցույց են տալիս, որ սահմանային թույլատրելի խտության գերազանցում չի դիտվում ոչ մի նյութի համար, հաշվի առնելով նաև ֆոնային աղտոտվածության արդյունքները, այդ իսկ պատճառով վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվները առաջարկվում է ընդունել որպես ՍԹԱ:

Վնասակար նյութերի համար սահմանված նորմատիվների առաջարկները ներկայացված են աղյուսակ 6-ում:

Հաշվարկների վերլուծության հիման վրա առաջարկվում է բոլոր նյութերի համար նախատեսված արտանետումները ընդունել որպես սահմանային թույլատրելի. տես աղյուսակ 5.:

Համաձայն վնասակար նյութերի ցրման հաշվարկի մակերսն ընդգրկում է մինչև 0.05ՍԹԱ աղտոտվածությամբ տարածքները, իսկ ցանցի քայլը թույլ է տալիս գնահատելու աղտոտվածությունն կազմակերպության տարածքի եզրին, սանիտարապաշտպանական գոտու սահմանի եզրին և ամենամոտ բնակելի տարածքներում: Տես. «Էկո ցենտր» համակարգչային ծրագրի հաշվարկը:

Ձեռնարկության արտանետումները չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում:

**9. ՄԹՆՈՒՈՐՏԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՐՏՈՏՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՑՆՈՂ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ**

«Էկո ցենտր» հաշվարկից երևում է որ ձեռնարկության արտանետումները տվյալ տեղանքի ֆոնային աղտոտվածության հետ չեն գերազանցում այդ վնասակար նյութերի համար սահմանված չափանիշները, այդ պատճառով արտանետումների քանակն իջեցնող միջոցառումների պլան չի նախատեսվում: Աղտոտող նյութերի գետնամերձ խտությունները չեն գերազանցում համապատասխան նյութերի ՍԹԿ:

«Էկո ցենտր» հաշվարկի բացատրագրում և աղյուսակներում երևում են առավելագույն գետնամերձ խտությունը առանց ֆոնի և ֆոնով:

Հաշվարկների արդյունքները աղյուսակների տեսքով բերված են հավելվածների մասում: Ինչպես երևում է հաշվարկների արդյունքներից փոշու գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակավայրի համար սահմանված ՍԹԿ սահմաններում:

Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաներ

Աղյուսակ 5

	<i>Նյութի անվանումը</i>	<i>Առավելագույն գետնամերձ կոնցենտրացիաները</i>			
		<i>ՍԹԿ</i>		<i>մասնաբաժնով</i>	
		<i>Արտադրահրապարակի եզրին</i>		<i>Ամենամոտ բնակավայրի եզրին</i>	
		<i>Ֆոնային կոնցենտրացիայի հետ միասին</i>	<i>Առանց ֆոնային կոնցենտրացիայի</i>	<i>Ֆոնային կոնցենտրացիայի հետ միասին</i>	<i>Առանց ֆոնային կոնցենտրացիայի</i>
1	Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	-	Cs= 0.83ՍԹԿ 0.249մգ/մ ³ X- 172.59մ, Y=-76.79մ	-	Cs= 0.720ՍԹԿ 0.216մգ/մ ³ X- 154մ, Y=212.3մ
2	Ածխածնի օքսիդ	Cs= 0,0474<0,05.	Cs= 0,0474<0,05.	Cs= 0,0474<0,05.	Cs= 0,0474<0,05.
3	Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	Cs= 0.247ՍԹԿ 0.049 մգ/մ ³ X= 104.2, Y= 203.1	Cs= 0.224ՍԹԿ 0.045 մգ/մ ³ X= 104.2, Y= 203.1	Cs= 0.25ՍԹԿ 0.05 մգ/մ ³ X= 27.5մ, Y= 273.49մ	Cs= 0.227ՍԹԿ 0.0454 մգ/մ ³ X= 27.5մ, Y= 273.49մ
4	Ածխաջրածիններ	-	Cs= 0.063 ՍԹԿ 0.063մգ/մ ³ X= 100մ, Y= 273.49մ	-	Cs= 0.05 ՍԹԿ 0.050 մգ/մ ³ X= 27.5մ, Y= 273.49մ

10. ՍՅԱ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ ՀԱՄՆԵՆՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՂՅՈՒՍԱԿ 5

N N ը / կ	Միջոցառման անվանումը և աղտոտման աղբյուրի համարը	Իրականաց- ման ժամկետը	Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը մինչև միջոցառումը		Վնասակար նյութի (նյութեր) արտանետումը իրականացնելուց հետո	
			գ/վրկ	տ/տարի	գ/վրկ	տ/տարի

ՓՈՇԻ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ (SiO₂ –20-70%)

1	1	2024	0.648	7.0	0.648	7.0
2	3	2024	0.463	5.0	0.463	5.0
3	4	2024	2.380	25.700	2.380	25.700
4	5	2024	1.070	18.5	1.070	18.5
5	6	2024	0.370	4.0	0.370	4.0
6	7	2024	0.278	4.8	0.278	4.8
	Ընդամենը	2024	5.209	65.0	5.209	65.0

ԱԾՆԱԾՆԻ ՕՔՍԻԴ

1	1	2024	0.609	6.573	0.609	6.573
2	2	2024	0.174	1.878	0.174	1.878
3	7	2024	1.120	19.350	1.120	19.350
	Ընդամենը	2024	1.903	27.801	1.903	27.801

ԱԶՈՏԻ ՕՔՍԻԴՆԵՐ (երկօքսիդի հաշվարկով)

1	1	2024	0.208	2.247	0.208	2.247
2	2	2024	0.060	0.642	0.060	0.642
3	7	2024	0.187	3.225	0.187	3.225
	Ընդամենը	2024	0.455	6.114	0.455	6.114

ԱԾՆԱԶՐԱԾԻՆՆԵՐ

1	1	2024	0.194	2.100	0.194	2.100
2	2	2024	0.083	0.900	0.083	0.900
	Ընդամենը	2024	0.277	3.0	0.277	3.0

Քանի որ արտանետումները չեն առաջացնում գերնորմատիվային աղտոտվածություն, չի նախատեսվում արտանետումների նվազեցմանն ուղղված միջոցառումներ, աղյուսակ 5-ը լրացվում է համաձայն փաստացի չափաքանակների, որոնք առաջարկվում են որպես ՍԹԱ նորմատիվներ:

11. ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐ ՄԹՆՈՒՈՐՑ ԱՐՏԱՆԵՏԵԼՈՒ
 «ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ
 ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ ԱՐՏԱՆԵՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՂՅՈՒՄԱԿ 6.

Աղտոտող նյութը	Ընդհանուր արտանետումները	
	գ/կրկ	տ/տարի
Փոշի անօրգանական (SiO ₂ –20-70%)	5.209	65.0
Ածխածնի օքսիդ	1.903	27.801
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	0.455	6.114
Ածխաջրածիններ	0.277	3.0

12 ԱՆԲԱՐԵՆՊԱՍՏ ԿՈՒՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Անբարենպաստ եղանակի դեպքում արտանետումների կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ և գործնականորեն ընդգրկում են վնասակար նյութերի արտանետումների բոլոր աղբյուրները:

1. Թույլ չտալ սարքավորման գերբեռնված աշխատանք
2. Խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին
3. Չբեռնավորել և չդատարկել լուծիչներ և հեշտ բոցավառվող բռնկվող նյութեր
4. Սահմանափակել վառելիքի մատակարարումը
5. Սահմանափակել փոշու արտանետումը
6. Վնասակար նյութերի արտանետումների քանակի մեծացման դեպքում հարկ է անմիջապես դանդաղեցնել կամ ժամանակավորապես դադարեցնել տվյալ սարքավորման աշխատանքը:

13. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ՍԹԱ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

Քանի որ ՍԹԱ կատարման համար պատասխանատու է ձեռնարկությունը, արտանետումներին հետևում և ստուգում է շրջակ միջավայրի պահպանության համար պատասխանատու անձը:

Վնասակար նյութերի արտանետումների քանակը որոշվում է այդ վնասակար նյութերի խտությունների և գազերի օդային խառնուրդների ծավալների ուղղակի չափման մեթոդներով: Ուղղակի չափման մեթոդների անհնարինության դեպքում թույլատրվում է տեսական հաշվարկի մեթոդը: Տվյալ դեպքում օգտագործվել է տեսական հաշվարկի մեթոդը:

Անբարենպաստ կլիմայական պայմանների ժամանակ, բնակչության առողջության համար վնասաբեր մթնոլորտի աղտոտման ընթացքում ձեռնարկությունը պարտավոր է վնասակար նյութերի արտանետումները իջեցնել ընդհուպ մինչև աշխատանքի դադարեցումը:

Եթե վթարի արդյունքում ՍԹԱ -ի նորմատիվը գերազանցվում է, ձեռնարկությունը պարտավոր է այդ մասին հայտնել մթնոլորտի պահպանությունը վերահսկող մարմնին և անհապաղ միջոցներ ձեռնարկել վնասակար նյութերի արտանետումները սահմանափակելու ուղղությամբ, ինչպես նաև «ՀՀ կառավարությանը ենթակա Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին» տեղեկատվություն հաղորդել վթարի և ձեռնարկված միջոցառումների մասին:

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ ՕՊՕ-ի ՀԱՇՎԱՐԿԸ

Սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվները սահմանվում են այն արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար, որոնց արտանետումների առավելագույն նախագծային ցուցանիշների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործումը մեկ տարում կազմում է երկու հարյուր միլիոնից մինչև երկու միլիարդ խորանարդ մետր, արտանետումների սահմանային չափաքանակներ են դրանց գործունեության արդյունքում առաջացած փաստացի արտանետումները:

Այն կազմակերպությունները, որոնք ունեն մթնոլորտային արտանետումների անշարժ աղբյուրներ և նրանց նախագծային առավելագույն արտանետումները պետք է բավարարեն հետևյալ պայմանը՝

$$O\text{ՊՕ}_{տարեկան} = \sum_{i=1}^n \frac{U_i}{U\text{Թ}^i}$$

- OՊՕ տարեկան-ը օդի պահանջվող օգտագործումն է՝ տարեկան կտրվածքով,
- U_i -ն i -րդ նյութի տարեկան առավելագույն արտանետումն է՝ ըստ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից հաստատված սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծի կամ տեխնոլոգիական ռեգլամենտի՝ մգ/տարի,
 - $U\text{Թ}^i$ -ն i -րդ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունն է՝ մգ/խոր. մ:

ԱՐՏՈՏՈՂ (ՎՆԱՍԱԿԱՐ) ՆՅՈՒԹԵՐԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

Նյութի անվանումը	Արտանետման քանակը, տոն/տարի	OՊՕ մլդն խոր.մ/տարի
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	65.0	(65.0 x 10 ⁹) : 0.1= 650.0
Ածխածնի օքսիդ	27.801	(27.801 x 10 ⁹) : 3= 9.267
Ազոտի օքսիդներ (երկօքսիդի հաշվարկով)	6.114	(6.114 x 10 ⁹) : 0.04=152.85
Ածխաջրածիններ	3.0	(3.0x 10 ⁹) : 1= 3.0
Ընդամենը		815.117

OՊՕ-ն գերազանցում է 2 մլրդ/մ³ շեմը (815.117մլրդ. մ³ //տարի), ապա ընկերությունը պետք է մշակի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվներ՝ արտանետման աղբյուրների կամ դրանց խմբերի համար:

**«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ գործունեությունից
արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցվելիք
Վնասի մեծության հաշվարկ**

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի, բնությանը հասցված վնասի հատուցման հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի», հաստատված 21.01.2005թ. թիվ N 91-Ն ՀՀ Կառավարության որոշմամբ,

«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ կողմից հասցված վնասի մեծության հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով`

$$U_2 = \zeta q \cdot \Phi g \cdot \sum P_1 \cdot V_1$$

որտեղ`

ζq - աղտոտող աղբյուրի շրջապատի գործակիցն է` - 4

Φg - փոխանցման գործակիցն է` - 1000 դրամ

V_1 – նյութի համեմատական վնասակարության մեծությունն է

P_1 – տվյալ նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է, որը հաշվում են հետևյալ բանաձևով`

$$P_1 = q \cdot / 3Sw_1 - 2U\theta U /$$

որտեղ`

q - անշարժ աղբյուրների համար – 1

Sw - տվյալ նյութի արտանետման քանակն է

**«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ արտանետումներով տնտեսությանը հասցված վնասի հաշվարկը
բերված է աղյուսակում**

Նյութի անվանումը	P_1 տոննա	ζq	Φg դրամ	V_1	Ա դրամ
Փոշի անօրգանական (SiO ₂ 20 -70%)	65.0	4	1000	10	2600000
Ածխածնի օքսիդ	27.801	4	1000	1	111204
Ազոտի օքսիդներ	6.114	4	1000	12,5	305700
Ածխաջրածիններ	3.0	4	1000	3	36000
Ընդամենը					3052904

ՌԵԼԻԵՖԻ ԳՈՐԾԱԿՑԻ ՀԱՇՎԱՐԿԸ
«ԱԺԴԱՆԱԿ» ՍՊԸ

Տեղանքի ռելիեֆի գործակցի հաշվարկը տրվում է՝

$$R = 1 + \Phi (R_n - 1) \text{ բանաձևով}$$

R – չափողականություն չունեցող, տեղանքի ազդեցությունը հաշվառող գործակիցն է: Հարթ կամ թույլ անկում ունեցող տարածքների համար, երբ 1կմ. վրա անկումը չի գերազանցում 50մ: R գործակիցը կարելի է ընդունել միավորին հավասար $R = 1$ (ՕՆԴ - 86 էջ 5):

Ձեռնարկությունը գտնվում է հարթ տարածքի վրա, աղբյուրի ամենաբարձ խողովակը 15մ է: Մինչև 1կմ հեռավորության վրա ΔH -ը չի գերազանցում 50մ, ուստի՝

$$R = 1$$

ՀՀ ՈՐՈՇ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴՆ ԱՂՏՈՏՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՖՈՆԱՅԻՆ ԿՈՆՑԵՆՏՐԱՑԻԱՆԵՐ (ՀՆԳԱՄՅԱ ՄԻՋԻՆ)

Ժամանակավոր առաջարկություններ ,Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ³)			
	Փոշի	Շմբի երկօքսիդ (SO₂)	Ազոտի երկօքսիդ (NO₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<i><10</i>	<i>0.071</i>	<i>0.006</i>	<i>0.023</i>	<i>0.8</i>

◀◀ Սյունիքի մարզ, գ. Լեռնաձոր,



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻՂՐՈՏՊԵՐԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ**

« 29 » 06 2020 թ.

N: 08/ԼԱ/ - 125

«Էկոբարիթ-աուդիտ» ՍՊԸ տնօրեն
պարոն Ա.Միրզախանյանին

Հարգելի պարոն Միրզախանյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի հունիսի 23-ի թիվ 06 գրության տրամադրում եմ բազմամյա կլիմայական հարաչափերն ըստ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Քաջարան օդերևութաբանական կայանի տվյալների.

Մթնոլորտի ստրատիֆիկացիայի գործակիցը	200
Տարվա ամենաշոգ ամսվա միջին առավելագույն ջերմաստիճանը T°C	29.6
Քամու բազմամյա միջին արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ)	3.4
Քամու բազմամյա միջին առավելագույն արագությունը (մ/վրկ), որը հնարավոր է 20 տարին մեկ անգամ (5% ապահովվածությամբ)	23

Քամու ուղղությունների և անոտորի կրկնելիությունը (%)

Հս	ՀսԱրլ	Արլ	ՀվԱրլ	Հվ	ՀվԱրմ	Արմ	ՀսԱրմ	Անոտոր
8	17	8	12	20	19	11	5	56

Հարգանքով՝
Տնօրենի d/պ

L. Ագիայան

Սպասարկման և մարկեթինգի բաժին
Նորա Հանրության 012-31-79-13



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՌԵՎԻԶԻՍՏԱՆԿԱՆ ԱՆՁԱՆԵ ՊԵՏԱԳՈՒԹՅԱՆ ԽԵԿԻՍՏ**

ՊԵՏԱԳՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄՈՒՏՅԱՆԻՑ ԹԱՂԱՎԵՔ ևս 2023-11-24



**«ԱԺԴԱՆԱԿ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)**

Գրանցման համար 72.110.959348

Հիմնադրման տարի 2017

Գրանցման ամսաթիվ 2017-05-22

Գործունեության ժամկետ **Անժամկետ**

-արդավիճակ **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկությունները դադարված չեն:**

Իրավաբանական անձի ծանկազիր (ԶԿԴ) 50467709

Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) 09425679

Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի ցարտի համար (Ապահովագրի ծանկազիր) 31119348

Էլ. փոստ azhdanak@mail.ru

Կայք -

Գտնվելու վայրը

Հասցե **ՔԱՐԻՎԱՎԱՆ ԹԱՂ / -- / Փ.4 / 1/1 ԼԵՌՆԱՁՈՐ 3314
ՔԱԶԱՐԱՆ ՍՅՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ**

Հեռախոս 093009350

Գործաշրջանային գեկալար

Պաշտոն Տնօրեն

Անուն Ազգանուն **ԳԱՌՆԻԿ ԴԱԶԱՐՅԱՆ ԼՅՈՒԱՑԻ**

Անձնագրային տվյալներ 014455323 2022-05-27 001

Հասցե **ՔԱԿՈՒՆՅԻ Փ. / Շ / 6 / ԲՆ.2 ՔԱԶԱՐԱՆ 3309
ՔԱԶԱՐԱՆ ՍՅՈՒՆԻՔ ՀԱՅԱՍՏԱՆ**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ГОСТ 17.2. 3. 02 - 2014 “Охрана природы. Атмосфера. Правила установления допустимых выбросов вредных веществ промышленными предприятиями”.
2. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами . Ленинград Гидрометеоиздат -1986г.
3. Временная инструкция о порядке проведения работ по установлению нормативов допустимых выбросов вредных веществ в атмосферу для отдельно нормируемых предприятий промышленности, ОНД-86.
4. ՀՀ կառավարության 27.12.2012թ. “Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու եվ Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին” թիվ 1673-Ն որոշումը:
5. ՀՀ Կառավարության 21.01.2005թ. թիվ N 91-Ն որոշմամբ. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի»:

ОТЧЕТ

Расчёт загрязнения атмосферы унифицированной программы расчёта загрязнения атмосферы УПРЗА «ЭКО центр» «Աժդահախլ» ՍՊԸ

Расчёт загрязнения атмосферы выполнен в соответствии с ОНД-86 «Методика расчета концентраций в атмосферном воздухе вредных веществ, содержащихся в выбросах предприятий», с использованием унифицированной программы расчёта загрязнения атмосферы УПРЗА «ЭКО центр».

1.1 Исходные данные для проведения расчета загрязнения атмосферы

порог целесообразности по вкладу источников выброса: **0,05**;

расчетный год **2024.**

Метеорологические характеристики и коэффициенты:

коэффициент, зависящий от температурной стратификации атмосферы: **200**;

средняя температура наружного воздуха, °С: **29,6**;

коэффициент рельефа: **1.**

Параметры перебора ветров:

направление, метео °: **0 - 360 (шаг 1)**;

скорость, м/с: **0,5 - 23 (шаг 0,1).**

Основная система координат - правая с ориентацией оси ОУ на Север.

Количество загрязняющих веществ в расчете - 4 (в том числе твердых - 1; жидких и газообразных - 3), групп суммации - 1. Перечень и коды веществ и групп суммации, участвующих в расчёте загрязнения атмосферы, с указанием класса опасности и предельно-допустимой концентрации (ПДК) либо ориентировочного безопасного уровня воздействия (ОБУВ), приведен в таблице 1.1.1.

Таблица № 1.1.1 - Перечень загрязняющих веществ и групп суммации

Загрязняющее вещество		Класс опасности	Предельно-допустимая концентрация, мг/м ³			
код	наименование		максимально-разовая	средне-суточная	ОБУВ	используется в расчете
1	2	3	4	5	6	7
301	Азота диоксид	3	0,2	0,04	-	0,2
337	Углерод оксид	4	5	3	-	5
2754	Алканы C12-19	4	1	-	-	1
2908	Пыль неорганическая: SiO ₂ 20-70%	3	0,3	0,1	-	0,3

Сведения о концентрациях загрязняющих веществ на фоновых постах, используемых в расчете загрязнения атмосферы, приведены в таблице 1.1.2.

Таблица № 1.1.2 - Сведения о концентрациях загрязняющих веществ на фоновых постах

Наименование фонового поста	Координаты поста		Загрязняющее вещество		Концентрация, мг/м ³				
					скорость ветра, м/с		3 – и*		
	Х	У	код	наименование	0 – 2	направление ветра			
1	2	3	4	5	6	С	В	Ю	З
Расчетная площадка 1(СК Основная СК)									
1. -	0	0	337	Углерод оксид	0,8	0,8	0,8	0,8	0,8
			301	Азота диоксид	0,023	0,023	0,023	0,023	0,023

Сведения о типе и координатах точек, в которых выполнялся расчет загрязнения атмосферы, приведены в таблице 1.1.3.

Таблица № 1.1.3 - Параметры расчетных точек

Наименование	Координаты			Тип точки
	X	Y	высота, м	
1	2	3	4	5
Расчетная площадка 1(СК Основная СК)				
2	3,54	67,1	2	Точка в промзоне
1	23,52	98,8	2	Точка в промзоне
3	56,95	73,4	2	Точка в промзоне
4	30,72	51,35	2	Точка в промзоне
5	27,5	273,49	2	Точка на границе ОСЗЗ
6	217,07	146,82	2	Точка на границе ОСЗЗ
7	172,59	-76,79	2	Точка на границе ОСЗЗ
8	-69,23	-112,66	2	Точка на границе ОСЗЗ
9	-173,75	108,33	2	Точка на границе ОСЗЗ
10	104,2	203,1	2	Точка в жилой зоне
11	154,5	212,3	2	Точка в жилой зоне
12	-58,5	-29,8	2	Точка в жилой зоне
13	-67,8	43	2	Точка в жилой зоне

Сведения о координатах расчетных площадок, шаге расчетной сетки, каждый узел которой образует расчетную точку, приведены в таблице 1.1.4.

Таблица № 1.1.4 - Параметры расчетных площадок

Наименование	Координаты срединной линии				Ширина, м	Высота, м	Шаг сетки, м	Шаг СЗЗ, м
	точка 1		точка 2					
	X ₁	Y ₁	X ₂	Y ₂				
1	2	3	4	5	6	7	8	9
1	-400	75,31	515,03	75,31	630,619	2	100	-

Характеристика нестационарности во времени источников загрязнения атмосферы и их не одновременности работы по группам, приведена в таблице 1.1.5.

Таблица № 1.1.5 - Характеристика нестационарности во времени источников загрязнения атмосферы и их не одновременности работы по группам

№ ИЗА	Учет в расчете	Исключе ние из фона	№ режим а ИЗА	Срок действия режима ИЗА в расчётном году		Рабочий график	Принадлежность к группе источников, работающих не одновременно
				начало	окончание		
1	2	3	4	5	6	7	8
Объект: 1. Объект №1 «Центральная УОС»							
Площадка: 1. Площадка №1							
Цех: 1. Цех №1							
1	+	+	-	01 January	31 December	-	-
2	+	+	-	01 January	31 December	-	-
3	+	+	-	01 January	31 December	-	-
4	+	+	-	01 January	31 December	-	-
5	+	+	-	01 January	31 December	-	-
6	+	+	-	01 January	31 December	-	-
7	+	+	-	01 January	31 December	-	-

Для каждого источника определены опасная скорость ветра, максимальная концентрация выброса в долях ПДК и расстояние, на котором достигается максимальная концентрация.

Параметры источников загрязнения атмосферы, учитываемых в данном варианте расчета, приведены в таблице 1.1.6.

Таблица № 1.1.6 - Параметры источников загрязнения атмосферы

№ ИЗА	Тип	Высота, м	Диаметр, м	Параметры ГВС			Координаты			К рел	Опас. скор. ветра, м/с	Загрязняющее вещество			Макс. конц-я, д.ПДК	Расст. до максима, м
				скорость, м/с	объем, м³/с	темп., °С	X ₁	Y ₁	ширина, м			код	масса выброса, г/с	К ос.		
							X ₂	Y ₂								
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Объект: 1. Объект №1 «Цағиһаһың УҗС» Площадка: 1. Площадка №1 Цех: 1. Цех №1																
1	1	15	0,6	30,2	8,539	150	29.3	82.2	-	1	4,095	2908	0,648	3	0,28	150,92
												337	0,609	1	0,005	301,84
												301	0,208	1	0,045	301,84
												2754	0,194	1	0,008	301,84
2	1	3	0,3	32,6	2,304	120	24.5	76.9	-	1	9,324	337	0,174	1	0,026	98,81
												301	0,06	1	0,226	98,81
												2754	0,083	1	0,062	98,81
3	1	12	0,6	25	7,069	20	17.1	72.1	-	1	1,625	2908	0,463	3	0,384	111,15
4	4	5	100	6	47123,9	20	35.21 48.62	63.75 83.96	30	1	343,2	2908	2,38	3	0,148	499,6
5	4	4	100	5	39269,9	20	24.44 35.18	48.22 65.12	34,5	1	357,5	2908	1,07	3	0,107	407,92
6	1	11	0,6	30,8	8,708	20	45.44	62.72	-	1	4,805	2908	0,37	3	0,26	130,05
7	1	11	0,6	28,4	8,03	140	40.85	54.9	-	1	4,836	2908	0,278	3	0,2	124,28
												337	1,120	1	0,016	248,56
												301	0,187	1	0,067	248,56

1.2 Расчет загрязнения по веществу «301. Азота диоксид»

Полное наименование вещества с кодом 301 – Азота диоксид (Азот (IV) оксид). Максимально разовая предельно допустимая концентрация составляет 0,2 мг/м³, класс опасности 3.

Количество источников загрязнения атмосферы, учтенных в расчёте составляет - 3 (в том числе: организованных - 3, неорганизованных - нет). Распределение источников по градациям высот составляет: 0-10 м – 1; 11-20 м – 2; 21-29 м – нет; 30-50 м – нет; 51-100 м – нет; более 100 м – нет.

Суммарный выброс, учтенных в расчёте источников, составляет 0,455 грамм в секунду и 0 тонн в год.

В расчёте учитывались фоновые концентрации, заданные на 1 ПНЗА (пост наблюдения за загрязнением атмосферы).

Расчётных точек – 13, расчётных площадок - 1 (узлов расчётной сетки - 70).

Максимальная расчётная приземная концентрация (См), выраженная в долях ПДК населенных мест, по расчётной площадке № 1 составляет:

- на границе СЗЗ **0,25**, которая достигается в точке № 5 X=27,5 Y=273,49, при направлении ветра 180°, скорости ветра 8,3 м/с, в том числе: фоновая концентрация – 0,115 (фоновая концентрация до интерполяции – 0,02424), вклад источников предприятия 0,227;

- в жилой зоне **0,257**, которая достигается в точке № 13 X=-67,8 Y=43, при направлении ветра 70°, скорости ветра 9,2 м/с, в том числе: фоновая концентрация – 0,115 (фоновая концентрация до интерполяции – 0,023), вклад источников предприятия 0,234.

Сведения о концентрациях загрязняющих веществ на фоновых постах, используемых в расчете загрязнения атмосферы, приведены в таблице 1.2.1.

Таблица № 1.2.1 - Сведения о концентрациях загрязняющих веществ на фоновых постах

Наименование фонового поста	Координаты поста		Загрязняющее вещество		Концентрация, мг/м ³				
					скорость ветра, м/с				
	X	Y	код	наименование	0 – 2	3 – u*			
						направление ветра			
1	2	3	4	5	6	7	8	9	10
Расчетная площадка 1(СК Основная СК)									
1. -	0	0	301	Азота диоксид	0,023	0,023	0,023	0,023	0,023

Сведения о типе и координатах точек, в которых выполнялся расчет загрязнения атмосферы, приведены в таблице 1.2.2.

